ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«03» դեկտեմբերի 2016 թվականի № 123-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ, 54-րդ հոդվածներով, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով «Էյ ընդ Էմ Ռեյր» ՍՊ ընկերության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 01/10-16 գրությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2013 թվականի մարտի 26-ի թիվ ԲՓ-19 դրական եզրակացությունը՝

Հրամայում եմ

1. «ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/548 թույլտվությունը՝ (այսուհետ՝ թույլտվություն) ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ համայնքի վարչական տարածքի Ուլաշիկ գետի ավազանում գտնվող N5 ածխաթթվային հանքային ջրի աղբյուրից՝ արդյունաբերական (շշալցում) նպատակով 0,77լ/վրկ ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:
2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 24,2 հազ.մ^3 ածխաթթվային հանքային ջուր:
3. Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝
1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել հրամանի 1-ին կետում նշված հանքավայրի (տեղամասի) օգտակար հանածոների արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում օգտակար հանածոների արդյունահանման պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.
2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո, 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի (թույլտվություն, պայմանագիր, համապատասխան փորձաքննություն անցած նախագիծ) փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ